

World Vision
Հայաստան

## Մեր առաքելությունը

Վորլդ Վիժնը քրիստոնյաների միջազգային ընկերակցություն է, որի նպատակն է մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի անունով աշխատել աղքատների և ճնշվածների հետ՝ հասնել բարեփոխումների և պայքարել հանուն արդարության:

## Մեր տեսլականը

Երազանքն է մեր՝
լիարժեք կյանքը մեր մանուկների:
Աղոթքն է մեր՝
ամենքի կամքը որ այդպես լինի:





www.wvarmenia.am

Վորլդ Վիժն միջազգային բարեգործական կազմակերպության կոչումն է բարեփոխել աղքատության մեջ ապրող երեխաների, նրանց ընտանիքների և համայնքների կյանքը: Ծրագրերի արդյունավետ իրականացման նպատակով Վորլդ Վիժնը համագործակցում է ՀՀ կառավարության, մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների, Հայաստանյայց Եկեղեցու, ՄԱԿ-ի գործակալությունների, միջազգային դոնոր կազմակերպությունների, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների և համայնքների հետ:

Վորլդ Վիժնն աշխատում է Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Սյունիքի, Տավուշի և Լոռու մարզերի և մայրաքաղաք Երևանի ավելի քան 200 համայնքներում՝ օժանդակելով ավելի քան 32 000 երեխաների և նրանց ընտանիքներին:

Մեր ծրագրերն ուղղված են առավել խոցելի երեխաների կայուն բարեկեցությունն ապահովելուն: Կրթական և առողջապահական ոլորտներում տարվող աշխատանքներ, մասնագետների վերապատրաստում, ծնողների և երեխաների իրազեկության բարձրացում, երեխաների իրավունքների պաշտպանություն, տնտեսական զարգացում և ենթակառուցվածքների վերականգնում՝ սրանք են Վորլդ Վիժն Հայաստանի 13 Տարածքային զարգացման ծրագրերի գործունեության հիմնական ուղղությունները: Մենք նպաստում ենք համայնքների հզորացմանը՝ երիտասարդներին և համայնքի անդամներին սովորեցնելով բարձրաձայնել իրենց կարիքների մասին և քայլեր ձեռնարկել դրանց լուծման համար: Տեղական և ազգային մակարդակում իրականացվող քարոզարշավների միջոցով ձգտում ենք համայնքների ձայնը հասցնել քաղաքականություն կերտող մարմիններին:

**Առողջապահություն.** Վորլդ Վիժնը համագործակցում է ՀՀ առողջապահության նախարարության, միջազգային գործակալությունների, տեղական և միջազգային կազմակերպությունների և բուժհաստատությունների հետ՝ բնակչության և հատկապես կարիքավոր համայնքներում ապրող մայրերի և երեխաների համար բուժծառայությունների հասանելիությունը և որակը բարելավելու նպատակով: Առողջապահական ծրագրերի շրջանակներում օրենսդրական բարեփոխումներին աջակցելուց բացի Վորլդ Վիժնը խրախուսում է հասարակության կողմից բժշկական ծառայությունների որակի վերահսկումը, երեխաներին և ծնողներին իրազեկում առողջապահության ոլորտում իրենց իրավունքների մասին, որպեսզի նրանք կարողանան պահանջել որակյալ բուժծառայություն: Մենք ձգտում ենք բարձրացնել համայնքային բուժաշխատողների որակավորումը և բուժհաստատություններին տրամադրում ենք առաջնային անհրաժեշտության բուժսարքավորումներ: Հանրային իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումներում Վորլդ Վիժնը անցկացնում է դասընթացներ առողջ սնուցման, երեխայի խնամքի և զարգացման վերաբերյալ, նպաստում է ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելմանը և առողջ ապրելակերպի խրախուսմանը:

**Կրթություն.** Մի շարք կրթական ծրագրերի միջոցով Վորլդ Վիժնն օգնում է երեխաներին ձեռք բերել լիարժեք և արդյունավետ կյանքի համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, և աջակցում է նրանց մասնակցությանն այն գործընթացներին, որոնք անմիջականորեն ազդում են նրանց կյանքի և բարեկեցության վրա: Մենք վերանորոգում և կահավորում ենք դպրոցներ ու մանկապարտեզներ, կազմակերպում մասնագիտական դասընթացներ, արտադասարանական խմբակներ և միջոցառումներ երեխաների և երիտասարդների համար: Բազմաթիվ համայնքներում կառուցվել են խաղահրապարակներ՝ երեխաների ազատ ժամանցի համար ապահով միջավայր ստեղծելու նպատակով: Մեր ծրագրերի միջոցով աջակցում ենք Հայաստանում ներառական կրթության ներդրմանը և հատուկ հաստատությունների բեռնաթափմանը՝ նպաստելով երեխաների վերադարձին ընտանիք: Աջակցում ենք դպրոցներում և մանկապարտեզներում նորարարական դասավանդման մեթոդների կիրառմանը և սովորեցնում ենք երեխաներին համացանցից անվտանգ օգտվելու կանոնները: Համագործակցելով ՀՀ կրթության և գիտության նախարարության, միջազգային գործակալությունների և այլ կազմակերպությունների հետ՝ Վորլդ Վիժնը մասնակցում է կրթության համակարգում երեխայի շահերի ապահովմանն ուղղված քաղաքականության մշակման և օրենսդրական բարեփոխումների աշխատանքներին:

**Հոգևոր զարգացում.** Վորլդ Վիժնը նպաստում է հասարակության մեջ հոգևոր արժեքների վերականգնմանն ու զարգացմանը: Երեխաների քրիստոնեական ուսուցմանը նպաստելու նպատակով, Հայ Առաքելական Եկեղեցու հետ համատեղ մշակվել և բաժանվել են դասագրքեր և ուսուցչի ձեռնարկներ: Մենք աջակցում ենք կիրակնօրյա դպրոցների գործունեությանը, կազմակերպում ուսուցիչների վերապատրաստում, Սուրբ Ծննդի և Զատիկի տոնակատարություններ: Սկսած 1998թ. ավելի քան 33 000 երեխա մասնակցել է Վորլդ Վիժնի քրիստոնեական ամառային ճամբարներին՝ ստանալով առողջ սնունդ և խնամք, մասնակցելով բազմաթիվ սպորտային, կրթական և մշակութային միջոցառումների:

**Տնտեսական զարգացում.** Վորլդ Վիժնի տնտեսական զարգացման ծրագրերի նպատակն է խթանել տնտեսական աճը Հայաստանի կարիքավոր շրջաններում: Մենք նպաստում ենք համայնքներում արժեքային շղթաների ստեղծմանը, որոնք տեղական արտադրողների համար հնարավորություն են ստեղծում գործունեություն ծավալել շուկայի պահանջներին համապատասխան: Վորլդ Վիժնն ընտանիքներին տրամադրում է անասուններ, սերմեր, մեքենաներ և այլ միջոցներ, ֆերմերներին ծանոթացնում է ժամանակակից գյուղատնտեսական տեխնոլոգիաներին, խթանում է գյուղատնտեսական արտադրանքի բազմազանությունը և ոչ ավանդական բույսերի մշակումը: Նպաստելով ընտանիքների եկամուտների աճին և աշխատատեղերի ստեղծմանը՝ մենք օգնում ենք ամուր հիմքեր ստեղծել կայուն զարգացման և երեխաների բարեկեցության բարելավման համար:



World Vision
Armenia

## Our Mission

World Vision is an international partnership of Christians whose mission is to follow our Lord and Saviour Jesus Christ in working with the poor and oppressed to promote human transformation, seek justice and bear witness to the good news of the Kingdom of God.

## Our Vision

Our vision for every child,
Life in all its fullness.
Our prayer for every heart,
The will to make it so.





www.wvarmenia.am

# World Vision in Armenia

World Vision is an international charitable organization working to create lasting change in the lives of children, families and communities living in poverty. Our goal is to make Armenia a home for children and youth living with hope and dignity, where they enjoy good health, are educated for life, experience love of God and their neighbours, and are cared for, protected and participating.

World Vision partners with the Government of Armenia, regional and local authorities, Armenian Churches, UN agencies, USAID and other international donor organizations, international and local NGOs and communities to effectively implement its projects.

World Vision works in more than 200 communities in Shirak, Aragatsotn, Gegharkunik, Syunik, Tavush and Lori marzes and in Yerevan, serving more than 32,000 children and their families. All our projects are focused on ensuring the sustained well-being of children, especially the most vulnerable. Education and health, training and capacity building, awareness raising and child protection, economic development and infrastructure are the areas that World Vision supports through 13 Area Development Programmes, funded by sponsors from Canada, Germany, France, Switzerland, Taiwan, UK and US. We promote community participation and empower youth and community members to voice their needs and take the ownership in addressing issues in their communities. We help communities to make their voice heard to policy-makers through local and national level advocacy campaigns.

**Health**: World Vision partners with the Ministry of Health, international donors, local and international organizations and healthcare institutions to improve the accessibility and quality of healthcare services, especially for mothers and children living in disadvantaged communities. In addition to the national level advocacy efforts, we promote public monitoring of healthcare services, educate children and parents on their health rights and empower them to demand for quality health care. We help to build capacity of community health workers, and deliver assets and medical equipment to healthcare institutions. We provide training on healthy nutrition, child care and development, and contribute to HIV/AIDS prevention and promotion of healthy lifestyle.

**Education**: Through a number of educational projects, World Vision helps children acquire knowledge and skills needed to lead productive, fulfilling lives and endorses their participation in the processes that affect their lives and contribute to their well-being.

We renovate and equip schools and kindergartens, provide vocational training and organize extracurricular classes and activities for children and youth. Modern playgrounds built in numerous communities ensure a safe environment for children's leisure and recreation.

Through our projects we promote inclusive education and deinstitutionalization of children. We introduce innovative teaching methods at schools and kindergartens, and undertake efforts to help keep children safe online. At the national level, World Vision advocates for policy reforms to ensure the best interests of a child in the education system, working hand-in-hand with the Ministry of Education and Science, international agencies and partner organizations.

**Spiritual Development**: World Vision pursues the mission of restitution and growth of spiritual values. In partnership with the Armenian Apostolic Church we develop and distribute textbooks and teacher manuals to help educate children about Christian faith and traditions. We support Sunday school activities, conduct training for school teachers and organize Christmas and Easter celebrations.

Since 1998, World Vision has been bringing children from needy families an exciting opportunity to spend their vacation at a summer camp. More than 33,000 children attended World Vision's Christian Summer Camps, where they enjoyed nutritious food, sports, educational and cultural activities.

**Economic Development**: World Vision's economic development projects aim to boost economic growth in the most vulnerable regions of Armenia. We support and promote value chains in the communities by creating opportunities for local producers to meet the current market needs. We provide families with livestock and assets, train farmers on modern agriculture techniques, promote diversification of agricultural products and cultivation of non-traditional plants. By making a tangible effect on increased income in families and job access, World Vision helps create a solid basis for sustainable development and improved child well-being.